

ԽՐԱՏ ՈՒՂԻՂ ՀԱՒԱՏՔԻ ՀԱՄԱՐ

Տերունական խրատին հետեւելով, որ պարգեւատր եւ բազմառատ բարեբարութեան համաձայն բոլորին կու տայ եւ ո՛չ ոք կը գրկէ, ինչպէս որ ըսաւ՝ «Խնդրողը պիտի ստանայ, փնտոողը պիտի գտնէ» (Մտ. 7.8), որ նաեւ իմանալին իբրեւ գիտութեան հաց եւ իմաստութեան գինի գեղեցկապէս մատակարարեց անոր քաղցը ունեցող բանական անձերուն քաղցիչներու բարձրաձայն հրաւերով հոգեւոր խրատնաճի կոչեց՝ առակողին համաձայն, մեզի ալ նոյնը իբրեւ օրէնք տուաւ ըսելով՝ «Նթէ մէկը քեզմէ բան մը խնդրէ՛ տո՛ւր» (Մտ. 5.42):

Նթէ լաւ է կարօտեալներուն պէտքերը հոգալ, որուն փոխարէն խոստացաւ շնորհի սկիզբէն պատրաստուած արքայութիւնը տալ, որչափ աւելի գովելի է լիացնել բարիքներէ աղփատ հոգիները: Այնքան աւելի, որքան նախապատիւ, մեծ եւ պատուական է հոգին՝ քան մարմինը, պատկեր ըլլալով աստուածայինին, մինչ մարմինը երկրորդական եւ հոգանիւթ է, գոր Տէրն ալ գործով յայտնեց, որովհետեւ գրուած է, թէ Իրեն հետեւող ժողովուրդը միայն երկու անգամ հացով կերակրեց, բայց կենարար խօսքին վարդապետութեամբ, որ հոգիներու կերակուրն է, համաձայն այն խօսքին՝ «Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ՝ Աստուծոյ բոլոր խօսքերով» (Բ. օր 8.3) միշտ անոնց հոգիները կը կերակրէ: Նաեւ իմաստուն ծառային առակով պատուիրեց նիշդ ժամանակին տալ ծառայակիցներուն կերակուրը. եւ դեռ կրկնապատիկ քանակներ շահողին եւ զլացողին օրինակով նոյնը ցոյց տուաւ, թէ պէտք է տալ ամէն անոր, որ կը խնդրէ (Մտ. 24.45-51, 2):

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔԱՐԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Նկատի ունենալով, որ Մեծ Պահքի ընթացքին Ս. պատարագը փակ վարագոյրի ետեւ կը մատուցուի, Երեքշաբթի գիշերուան Ս. պատարագի մատուցումը պիտի դադարեցնենք Երեքշաբթի, 2 Մարտ 2019-էն սկսեալ:

Ս. պատարագի մատուցումը պիտի վերսկսինք Երեքշաբթի գիշեր, 30 Ապրիլ 2019-ին, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ:

ԵՐԵՔԱՐԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ Ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-8:30, Պուրճ Համուտի Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան – Եռագոյն» սրահին մէջ, Ազգային Առաջնորդարանի Երիտասարդական Յանձնախումբի կազմակերպութեամբ, տեղի պիտի ունենայ 18-40 տարեկան երիտասարդ երիտասարդուհիներու ծանօթացման ընկերային հաւաք, ապա՝ ժամը 8:30-9:00, Աստուածաշունչի սերտողութիւն եւ հայ քրիստոնէական կեանքի հաւաքական քննարկում: Աստուածաշունչի սերտողութիւնը պիտի կատարէ Լիբանանի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս: Առաջին հաւաք եւ սերտողութիւն՝ Երեքշաբթի, 22 Յունուար 2019-ին:

Կը հրաւիրենք հայ երիտասարդութիւնը Հայ Եկեղեցւոյ հովանիին տակ համախորմբուելու եւ Աստուծոյ Խօսքով աճելու:

ԵՐԵՔԱՐԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-8:30, Պուրճ Համուտի Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան – Եռագոյն» սրահին մէջ, տեղի պիտի ունենայ բոլոր տարիքի հայորդիներուն համար, ծանօթացման ընկերային հաւաք, ապա՝ ժամը 8:30-9:00, Աստուածաշունչի սերտողութիւն եւ հայ քրիստոնէական կեանքի հաւաքական քննարկում:

Աստուածաշունչի սերտողութիւնը պիտի կատարէ Արժ. Տ. Ղեւոնդ Քհն. Լօշ-խաճեան: Առաջին հաւաք եւ սերտողութիւն՝ Երեքշաբթի, 5 Մարտ 2019-ին: Կը հրաւիրենք հայ ժողովուրդի զաւակները Աստուծոյ Խօսքով աճելու:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ԸԱՔԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 - facebook-ի էջ jerak ճրագ քերթ



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՍ ՌՅՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԾԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119.105)

ԺԲ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 14 ԱՊՐԻԼ 2019

ԹԻԻ 15

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Երգ. 1.1-2.3: Ձք 9.9-15: Փլայ. 4.4-7:

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 20.29-21.17

ԾԱՂԿԱԶԱՐԳ

Երբ Յիսուս եւ իր աշակերտները Երիքովէն դուրս կ'ելլէին, մեծ բազմութիւն մը հետեւեցաւ իրենց: Ճամբու եզերքին նստած երկու կոյրեր, երբ լսեցին, որ Յիսուս կ'անցնի, սկսան աղաղակել. «Ողորմէ՛ մեզի, Յիսուս, Դաւիթի որդի»: Ժողովուրդը սաստեց անոնց որպէսզի լռեն, բայց անոնք աւելի բարձր ձայնով շարունակեցին աղաղակել. «Ողորմէ՛ մեզի, Տէր, Դաւիթի որդի»: Յիսուս կանգ առաւ, իր մօտ կանչեց կոյրերը եւ հարցուց. «Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ ձեզի»: Անոնք պատասխանեցին. «Տէ՛ր, թող մեր աչքերը բացուին»: Յիսուս գրաց եւ անոնց աչքերուն դպաւ: Կոյրերը անմիջապէս սկսան տեսնել եւ հետեւեցան իրեն:

Երբ Երուսաղէմի մօտեցան եւ հասան Բեթփազէ՝ Չիթենաց լեռան կողին, Յիսուս իր աշակերտներէն երկուքը որկեց՝ անոնց պատուիրելով. «Գացէ՛ք սա դիմացի գիւղը եւ անմիջապէս հոն կ'ապուած էջ մը պիտի գտնէք իր աւանակին հետ. քակեցէ՛ք եւ ինծի բերէ՛ք: Եթէ մէկը առարկէ, ըսէ՛ք. "Տէրը անոնց պէտք ունի", եւ անմիջապէս թոյլ պիտի տայ ձեզի»: Ասիկա պատահեցաւ, որպէսզի իրականացայ մարգարէին խօսքը. «Երուսաղէմի ըսէ՛ք. Ահա քու թագաւորդ քեզի կու գայ. Անիկա հեզ է, նստած իշու մը աւանակին վրայ»:

Աշակերտները գացին եւ կատարեցին ինչ որ Յիսուս պատուիրեց իրենց: Բերին էջն ու աւանակը եւ իրենց հագուստները անոնց վրայ դրին: Ապա Յիսուս նստաւ աւանակին վրայ: Ժողովուրդէն շատեր իրենց հագուստները կը փռէին ճամբուն վրայ, ուրիշներ ծառերէն ոստեր կը կտրէին եւ կը տարածէին ճամբուն վրայ: Եւ ամբողջ բազմութիւնը, որ թափօրին մէջ Յիսուսի առջեւէն կ'երթար կամ կը հետեւէր իրեն, կ'աղաղակէր. «Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին, օրհնեալ է ան, որ կու գայ Տիրոջ անունով: Օրհնութի՛ւն Բարձրեալին»:

Երբ Յիսուս Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դողդեցաւ: «Ո՞վ է ասիկա», կը հարցնէին քաղաքի բնակիչները. եւ ամբողջը կը պատասխանէր. «Ասիկա Յիսուս մարգարէն է, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն»:

Ապա Յիսուս տաճար մտաւ եւ դուրս վընտեց բոլոր անոնք որոնք տաճարին մէջ առուծախ կ'ընէին. լումայափոխներուն սեղանները եւ աղանէվաճառներուն աթոռները շրջեց եւ ըսաւ անոնց. «Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. "Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի", մինչ զուր գայն աւազակներու որջի վերածած էք»: Տաճարին մէջ Յիսուսի մօտեցան կոյրեր եւ կաղեր եւ ան բժշկեց զանոնք: Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան Յիսուսի կատարած հրաշքները եւ լսեցին աղաղակը մանուկներուն, որոնք տաճարին մէջ կը գոչէին. «Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին», բարկացան եւ Յիսուսի ըսին. «Կը լսե՞ս ինչ կ'ըսեն անոնք»: Յիսուս պատասխանեց. «Այո՛, չէ՞ք կարդացած Սուրբ Գիրքին սա խօսքը, թէ "Մանուկներու եւ կարճկեր երեխաներու բերնով գովեստ հիւսեցիր"»:

**ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՆԱՄԱԿՆԵՐ**

**ԶԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԷՆ
9.9-17**

Մեծապես ուրախացի՛ր, Սիոնի՛ բնակիչ, ցնծութեամբ աղաղակէ՛, բնակի՛չ Նրուսաղէմի. ահա թագաւորդ քեզի կու գայ արդարութիւն եւ փրկութիւն բերելու. որպէս հեգութեան նշան՝ նստած իշու վրայ, դեռ մատղաշ աւանակի վրայ:

Անիկա Նփրեմի երկրէն պիտի անհետացնէ պատերազմի կտոճերը, Նրուսաղէմէն պիտի վերացնէ պատերազմի ձիերը, պատերազմի աղեղը պիտի խորտակէ եւ խաղաղութիւն պիտի յայտարարէ ժողովուրդներուն: Անիկա իր իշխանութիւնը պիտի տարածէ ծովէ ծով, Նփրատ գետէն սկսեալ մինչեւ ծայրերն աշխարհի:

Գալով քեզի, Տէրը այսպէս կ'ըսէ. «Քանի արիւնով ուխտ կնքեցի հետդ, գերեզմանա՞ծ քու եղբայրներդ պիտի ազատեմ անջրդի անապատին խորերէն:

Նրուսաղէմ վերադարձէ՛ք, ո՛վ գերիներ, որ յայտով կը սպասէք, ահա կը յայտարարեմ թէ ձեր ախարի ժամանակաւոր գրկամկներուն փոխարէն կրկնապատիկ բարիքներով պիտի հատուցանեմ ձեզի:

Ինձի համար Յուդան պիտի լարեմ աղեղի պէս, իսկ Նփրեմը՝ նետի պէս: Զաւակներդ հեթանոսներուն դէմ պիտի հանեմ, ո՛վ Սիոն, եւ քեզ ձեռքիս մէջ պիտի բռնեմ պատերազմիկ զինուորի պողպատեայ սուրին նման»:

Այո՛, Տէրը ինք վերակացու պիտի ըլլայ անոնց վրայ: Անոր նետը փայլակի պէս պիտի հարուածէ: Տէրը, Ամենակալ Աստուածը փող պիտի հնչեցնէ եւ թշնամիներուն դէմ պիտի փախէ՝ մրրիկի պէս սպառնալից:

Շարունակել ընթացել Աստուածաշունչէն

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ
4.4-7**

Միշտ ուրախ եղէ՛ք Աստուծո՞ւմով. դարձեալ կ'ըսեմ՝ ուրախ եղէ՛ք: Բոլորին հանդէպ հեզ եւ ազնիւ եղէ՛ք: Շուտով Տէրը կու գայ: Ոեւէ բան թող չմտաւորէ ձեզ. այլ միշտ ձեր աղօթքներուն եւ աղաչանքներուն մէջ գոհունակ սրտով Աստուծո՞ւմէ խնդրեցէ՛ք ինչ բանի որ կարիքը կը զգաք, եւ այն ատեն Աստուծոյ խաղաղութիւնը, որ միտքով կարելի չէ հասկնալ, խաղաղ պիտի պահէ ձեր սիրտերն ու միտքերը՝ որոնք Քրիստոս Յիսուսի միացած են:

**ՈՐԵՆԷ ՕՐԵՆՔ ՉԻ ԿՐՆԱՐ
ԱՐԳԻԼԵԼ ԲԱՐԻՆ ԳՈՐԾԵԼ**

«Օրէնքը Շաբաթ օրով ի՞նչ ընել կը թելադրէ. բարի՞ք գործել, թէ՛ չարիք» (Մր. 3.4): **Հրեային համար Շաբաթ օրը սուրբ պահել՝ կը նշանակէր այդ օրը ոչ մէկ գործ կատարել, ո՛չ բարի գործ եւ ո՛չ ալ չար: Հրեային համար Շաբաթ օրով գործ մը գործելը գայթակղեցուցիչ էր, մինչդեռ Քրիստոսի համար գայթակղեցուցիչը բարի գործ մը չգործելն էր: Բարեգործութիւնը Շաբաթ օրը սուրբ պահելու օրէնքին խախտումը չէր կրնար ըլլալ եւ օրէնքը ինք ուրիշին համար բարիք գործելու արգելք չէր կրնար հանդիսանալ: Քրիստոս երբեք պիտի չուզէր, որ Հրեաները աստուածատուր օրէնքին մէջ տեսնէին արգելումը բարեգործութեան: Սիրելի՛ ընթերցող, օրինապահութիւնդ կ'արգիլէ՞ քեզի որ բարիք գործես:**

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ծ Ա Ղ Կ Ա Ջ Ա Ր Գ



Մեծ պահոց վերջին Կիրակին կը կոչուի Ծաղկազարդ:

Ծաղկազարդը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հանդիսաւոր մուտքն է Նրուսաղէմ:

Երբ Յիսուս աւանակին վրայ նստած մուտք կը գործէ Նրուսաղէմ, ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն ցոյց կու տայ անոր, ձիթենիի եւ արմաւենիի ճիւղերով կը դիմաւորէ զինք: Անոնք նոյնիսկ իրենց հագուստները կը փռեն գետին, որպէսզի Յիսուս անոնց վրայէն անցնի:

Երբ Յիսուս տաճար կը մտնէ կը տեսնէ, որ շուկայի վերածուած է ան, անմիջապէս կը մաքրէ տաճարը ու բոլորին կը հասկցնէ, որ տաճարը միայն աղօթքի համար կը գործածուի:

Ծաղկազարդի Շաբաթ երեկոյեան, ժամերգութեան ընթացքին կը բացուի քառասուն օրեր փակ մնացած խորանը: Ծաղկազարդի օրը Անդաստանի ժամանակ կ'օրհնուին ձիթենիի ճիւղերը եւ հաւատացեալները օրհնուած ձիթենիի ոստերը կը տանին տուն:

Յատկանշական է Ծաղկազարդի թափօրը, որուն կը մասնակցին բոլոր մանուկներն ու երեխաները զարդարուն ու գունաւոր մոմերով:

Ի՞նչ է թափօրը:

Ս. Պատարագի սկիզբը, պատարագիչ եկեղեցականը խորան բարձրանալէ ետք վարագոյրը կը գոցուի: Վարագոյրին ետին կը պատրաստէ Ս. Պատարագի սկիզբ՝ նշխարն ու գինին: Վարագոյրը բացուելով՝ պատարագիչը խորանէն վար կ'իջնէ խաչ ու բուրվառ ձեռքին եւ դպիրներ՝ խումբով առջեւէն շարական երգելով ժողովուրդին մէջ կը դառնան: Այս կը կոչուի թափօր:

Թափօրը կը խորհրդանշէ Յիսուս Քրիստոսի աշխարհ գալը եւ ժողովուրդին մէջ շրջիլն ու քարոզելը:

Երբ պատարագիչը թափօր կը դառնայ, հաւատացեալները պարզ դիտողներ պէտք չէ մնան: Այսօր ընդհանրացած երեւոյթ դարձած է թափօրի ատեն տեսնել հաւատացեալները, որոնք անտարբերութեամբ կը հետեւին եկեղեցոյ մէջ դարձող պատարագիչին: Անոնք որոնք մօտ են պատարագիչին, բարեպաշտական մղումէ մեկնած կը մօտենան անոր ձեռքի խաչը համբուրելու, ոմանք քաղաքավարութիւն կը զգան խաչը համբուրել, ուրիշներ պատարագիչին հաճելի թուելու համար կը համբուրեն, ուրիշներ կը զգան թէ պարտաւոր են համբուրելու, եւ ինչքան զգալի կ'ըլլայ խաչը համբուրելու մեքենական շարժումները: Իսկ անոնք որոնք պատարագիչէն հեռու են, ի՞նչ կ'ընեն: Անոնք ըսելիք չունին:

Պատարագիչը երբ ժողովուրդին մէջ թափօր կը դառնայ, հաւատացեալները պէտք է մեղմ ձայնով ըսեն «Յիշեսցի՛ր եւ զմեզ առաջի անմահ գառի՞ն Աստուծոյ», այսինքն՝ «Մեզ ալ յիշէ Աստուծոյ գառի՞ն (Քրիստոսի) առջեւ: